*Աննա ԱՍԱՏՐՅԱՆ*

## *ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ*
## *(Ն.Տիգրանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)*

Ինչպես հայտնի է, 1958թ. հիմնադրված ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական կարևորագույն ուղղություններից է հայ երաժշտության դասականների ստեղծագործության ուսումնասիրությունը և ակադեմիական հրատարակության նախապատրաստումը, նրանց նամականու, հուշագրության, գիտական ու հրապարակախոսական ժառանգության հրատարակումը:

Եվ միանգամայն բնական էր, որ իր ստեղծման առաջին իսկ օրվանից Արվեստի ինստիտուտի երաժշտագետների ուշադրության կենտրոնում պիտի հայտնվեր հայ պրոֆեսիոնալ երաժշտության և կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ հայ ազգային դաշնամուրային երաժշտության հիմնադիր, տաղանդավոր կոմպոզիտոր, ազգագրագետ, Արևելքի երկրների երաժշտական ստեղծագործության մեծ գիտակ, փայլուն դաշնակահար, երաժշտական-հասարակական աննկուն գործիչ, հմուտ մանկավարժ, երաժշտության մասին մի շարք հոդվածների հեղինակ Նիկողայոս Տիգրանյանը (1856-1951թթ.):Հայ երաժշտության պատմության մեջ ամենաերկարակյացը, Ալ. Սպենդիարյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Արևելքի երգիչ մեծ երաժիշտը», հայ կոմպոզիտորներից առաջիններից էր, որ հավաքեց ժողովրդական պարեղանակներն ու երգերը, առաջինն էր, որ եվրոպական երաժշտական միջոցներով գրառեց մուղամների բարդ ձևերն ու մշակեց դրանք դաշնամուրի, ձայնի, ջութակի, կամերային-գործիքային անսամբլների, սիմֆոնիկ և ժողովրդական գործիքների նվագախմբերի համար:

Ն. Տիգրանյանի ստեղծագործության հետազոտությունն ստանձնում է Արվեստի ինստիտուտի հիմնադրումից ընդամենը մեկ տարի անց՝ 1959թ. ինստիտուտում աշխատանքի անցած Ռուզաննա Մազմանյանը,[1] որն էլ իր հետազոտական աշխատանքի արդյունքներն ամփոփում է կոմպոզիտորի մասին առաջին դիսերտացիայում՝ անդրանիկ մենագրական ուսումնասիրության մեջ: Ն. Տիգրանյանի ժառանգության ուսումնասիրողի ընտրությունը խորհրդանշական էր. քչերին է հայտնի այն փաստը, որ Ռ. Մազմանյանի հայրը՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր ճարտարապետ, Երևանի շինարարական (պոլիտեխնիկական) ինստիտուտի առաջին ռեկտոր Միքայել Մազմանյանը, Լենինականի գլխավոր հատակագծի հեղինակն է (1932-1937թթ.): Այստեղ նրա նախագծով 1935-1937թթ. կառուցվել են մի շարք բնակելի և վարչական շենքեր: Ավելին, Ռ. Մազմանյանի մայրը՝ դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդա-

---

[1] *Ռ. Մազմանյան (16.12.1933, Երևան - 31.03.2006, Երևան) - երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու (1974), ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության անդամ (1984): Ցոքնամյա կրթություն ստացել է Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, 1953-ին ավարտել Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը՝ աշակերտելով անվանի դաշնակահար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոբերտ Անդրիասյանին: 1958-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը՝ ստանալով երաժշտագետ-պատմաբանի որակավորում: 1958-1959թթ. դասավանդել է Երևանի Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում: 1959թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, սկզբում որպես լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող: Արվեստի ինստիտուտում շուրջ կես դար Ռ. Մազմանյանն իր գիտաստեղծագործական կյանքով անմնացորդ նվիրումով անգնահատելի ծառայեց հայ երաժշտական արվեստին: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ արժեքավոր գրքեր ու գիտական հոդվածներ, այդ թվում՝ Ն. Տիգրանյանի մասին մենագրությունը (1978), «Սովետահայ գրականությունը 1966-1973 թթ. երաժշտության մասին» գիրքը (1974): Կազմել է ու ծանոթագրել Ն. Տիգրանյանի «Հոդվածներ, հուշեր ու նամակներ» ժողովածուն (1981):*
*Հայ երաժշտագիտության համար կարևոր հանգրվան դարձան «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945)» (1979), «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960)» (1986) և «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910» (2006, հետմահու) աշխատությունները,որոնք գիտական այդ ժանրում օրինակելի աշխատանքներ են:*

կան արտիստուհի Վարդուշ Ստեփանյանը, դարձավ Վարդան Աճեմյանի ղեկավարությամբ 1928թ. նոյեմբերի 1-ին բացված Լենինականի Ա. Մռավյանի անվան նորակազմ պետական դրամատիկական թատրոնի հիմնադիրներից մեկը՝ լենինականյան բեմում հանդես գալով մինչև 1930 թվականը:

Երիտասարդ գիտաշխատողը ձեռնամուխ է լինում Ն. Տիգրանյանի կյանքին ու ստեղծագործական գործունեությանն առնչվող բազմաթիվ նյութերի ու վավերագրերի՝ նամակների,[2] հուշերի,[3] կոմպոզիտորի՝ գիտական ու պատմական կարևոր նշանակություն ունեցող հոդվածների[4] ուսումնասիրմանը, ծանոթանում Տիգրանյանի մասին առկա ողջ գրականությանը՝ հոդվածներ և գրախոսականներ մամուլում,[5] կոմպոզիտորին նվիրված առանձին գլխներ դիսերտացիաներում[6] և գրքերում,[7] նրա մասին անդրանիկ աշխատանքը՝ Գումրեցու "Н. Ф. Тигранов и музыка Востока"[8] գրքույկը, ուր ներկայացված է նրա կյանքն ու ստեղծագործական գործունեությունը մինչև 1927 թվականը, Տիգրանյանին նվիրված առանձին բաժինները հայ երաժշտության հարցերին նվիրված՝ Ա. Շահվերդյանի, Մ. Հարությունյանի, Ա. Բարսամյանի, Մ. Մուրադյանի, Շ. Ամիրյանի, Կ. Խուդաբաշյանի գիտական հոդվածներում, ինչպես նաև Գ. Տիգրանովի և Մ. Տերյանի հոդվածները:

Առենախոսն ուսումնասիրել է կոմպոզիտորի գրեթե ողջ ժառանգությունը՝ ինչպես հրատարակված, այնպես էլ ձեռագիր՝ բացահայտելով նրա ստեղծագործության մի շարք կարևոր ոճական առանձնահատկությունները:

1974թ. Ռ. Մազմանյանը պաշտպանում է "Никогайос Тигранян. Жизнь и творчество" թեմայով թեկնածուական դիսերտացիան՝ կոմպոզիտորի մասին անդրանիկ ծավալուն աշխատությունը, որի անհրաժեշտությունը հասունացել էր վաղուց, և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Առենախոսության վեց գլուխներում Մազմանյանը հանգամանալից քննության է առել Ն. Տիգրանյանի կյանքը, նրա կատարողական, հրապարակախոսական և մանկավարժական գործունեությունը, ստեղծագործությունը: Առաջին գլխում ներկայացված է դարաշրջանը՝ XIX դարի երկրորդ կեսն ու XX դարի առաջին կեսը, սոցիալական ու պատմամշակութային մթնոլորտը, ուր ծավալվել է Ն. Տիգրանյանի գործունեությունը: Տրված են Տիգրան Չուխաջյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի և Մակար Եկմալյանի ստեղծագործական գործունեության համառոտ բնութագրերը, նրանց շարքում նաև՝ Ն. Տիգրանյանի դերն ու նշանակությունը հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտության ձևավորման վաղ փուլում: Երկրորդ գլխում ներկայացված է Ն. Տիգրանյանի կյանքն ու գործունեությունը: Երրորդ գլուխը նվիրված է Տիգրանյանի ժառանգության մեջ առավել նշանակալի տեղ զբաղեցնող կարևոր նշանակություն ունեցող՝ դաշնամուրի համար ժողովրդական պարերի (այդ թվում՝ «Դյուզ պար», «Ետ ու առաջ», «Թարս պար», «Գյումրվա կլոր

---

[2] *Տե՛ս ԳԱԹ, Ն. Տիգրանյանի դիվան:*

[3] *Նույն տեղում: Խոսքը նաև կոմպոզիտորի զարմիկների՝ երաժշտագետներ Միքայել Տերյանի և Գեորգի Տիգրանովի անտիպ հուշերի մասին է:*

[4] *Տե՛ս ԳԱԹ՝ Ն. Տիգրանյանի դիվան:*

[5] *Նկատի ունենք դեռևս 1897-ին «Новое время» հանդեսի մայիսի 12-ի համարում տպագրված Իպանով-Բորեցկու "Сборник Закавказских мелодий Н.Тиграняна" հոդվածը ինչպես նաև «Աշակ», «Արձագանք», «Տարազ», «Մուրճ», «Թատրոն և երաժշտություն», «Սովետական Հայաստան»,«Новое время", "Биржевые ведомости", "Жизнь искусства", "Театр и музыка", "Тифлисский листок", "Коммунист" թերթերում ու հանդեսներում լույս տեսած հոդվածներն ու գրախոսականները՝ Տիգրանյանի համերգային գործունեության մասին:*

[6] *Տե՛ս Մարգարիտ Հարությունյանի "Пути становления армянской национальной композиторской школы" (1954) և Կարինե Խուդաբաշյանի "Ранний этап развития многоголосия в армянской музыке" (1970) թեկնածուական դիսերտացիաները:*

[7] *Տե՛ս Ալ. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», «Հայ երաժշտության պատմության ակնարկներ» (հեղ.՝ Ք. Ջուշնարյան, Մ. Մուրադյան, Գ. Գյոլակյան), Մ. Մուրադյանի «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարի սկզբին», Մ. Հարությունյանի և Ա. Բարսամյանի «Հայ երաժշտության պատմություն» դասագիրքը և այլն:*

[8] *Տե՛ս Гумрецци, Н. Ф. Тигранов и музыка Востока, Ленинград, 1927, առաջաբանը՝ Ալ. Սպենդիարյանի և Ն. Մառի:*

պար», «Ֆատեն կիտամ», «Վարդ կոշիկս», «Ռանգի», «Ուզունդարա», «Զուռնի տրնգի» և այլն) մշակումների բնութագրմանը, դրանց երաժշտական ոճի բնորոշ գծերի ընդհանրացմանը: Տիգրանյանի 25 պարերի մշակումները (այդ թվում 22-ը՝ հրատարակված) ազգային երաժշտության հիշյալ բնագավառը բարձրացրին նոր մակարդակի: «Կոմպոզիտորին հաջողվում է երաժշտական արտահայտչամիջոցներով ներկայացնել ժողովրդական պարի խորեոգրաֆիկ պատկերի առանձնահատկությունները, բացահայտել դրա կերպարային-հուզական բովանդակությունը: Այդպիսով, յուրաքանչյուր պիես վերածվում է ժողովրդական կյանքի ինքնուրույն կենդանի տեսարանի»[9],- եզրակացնում է հեղինակը: Ռ. Մազմանյանն անդրադառնում է հայ ժողովրդական երգերի տիգրանյանական վեց մշակումներին նույնպես («Միքխաբ-միքխաբ», «Լուսնյակ գիշեր» ևն): Դրանք, հանդես գալով այնժամ, երբ հայ կոմպոզիտորների առջև ծառացել էր ազգային ինքնատիպության և եվրոպական երաժշտական տեխնիկայի նվաճումների զուգորդման վրա խարսխված ազգային երգացանկի ստեղծման բարդ ու կարևոր խնդիրը, նկատելի տեղ են գրավում ժանրի զարգացման պատմության մեջ: Այստեղ հիմնականում ներկայացված է սիրային-քնարական ժանրը, նաև՝ Ջիվանու փիլիսոփայական «Ճախորդ օրերի» մշակումը:

Ռ. Մազմանյանը, բնականաբար, առանձին գլուխ է հատկացնում դաշնամուրի համար մուղամների (այդ թվում՝ «Չարգյահ», «Նովրուզ արաբի», «Հեյդարի» ևն) փոխադրումների վերլուծությանը. Տիգրանյանն Արևելքի կոմպոզիտորներից առաջինն էր, որը գրառեց ու մշակեց մուղամները՝ կորստյան վտանգից փրկելով ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության այդ հարուստ ու բարձրարժեք նմուշները: Տիգրանյանը մշակել է Հայաստանում լայն տարածում գտած գործիքային մուղամները՝ նախատեսված լարային և փողային գործիքների կատարման համար: Ռ. Մազմանյանը կատարում է Տիգրանյանի մշակած մուղամների և աղքեջանական մուղամների համեմատական վերլուծությունը ևս: «Մուղամների մշակումներում օգտագործելով եվրոպական երաժշտության նվաճումները, Տիգրանյանը մուղամաթի կուլտուրան հասցրեց այն փուլին, երբ դա կարող էր հիմք ծառայել Արևելքի ժողովուրդների նոր պրոֆեսիոնալ (բազմաձայն) դպրոցի ներկայացուցիչների կողմից տնատների, սիմֆոնիաների, կոնցերտների, կվարտետների, ռապսոդիաների և այլնի համար»:[10]

Հինգերորդ գլուխը լույս է սփռում Ն. Տիգրանյանի ստեղծագործության վերջին շրջանի վրա. մուղամների և ժողովրդական պարերի դաշնամուրային մշակումներն ստանում են նոր կյանք՝ նկատի ունենք դրանց փոխադրումները սիմֆոնիկ նվագախմբի,ժողովրդական գործիքների նվագախմբի և կամերային-գործիքային անսամբլների համար: Կոմպոզիտորի կամերային-գործիքային ստեղծագործությունները, որոնցում օրգանապես միահյուսվեցին հայ ժողովրդապրոֆեսիոնալ գործիքային երաժշտության և եվրոպական կամերային երաժշտության բնորոշ գծերը, նշանակալի դեր խաղացին հայ երաժշտության մեջ՝ ժանրի զարգացման գործում: Սիմֆոնիկ փոխադրումների առնչությամբ հեղինակը նշում է, որ դրանք արված են ճաշակով, «սրանցում ազգային կողորիտը զուգակցվում է եվրոպական երաժշտական տեխնիկայի հետ: Գործիքավորումը պարզ է, թափանցիկ, մենատակար գործիքների, ձայնառությունների լայն օգտագործմամբ»:[11] Հատկապես ուշադրության է արժանի Պաղտասար Դալիրի «Ի նընջմանդ արքայական»-ի մշակումը a cappella քառաձայն երգչախմբի համար, որը կատարել է կոմպոզիտորը 92 տարեկան հասակում:

Հեղինակն անդրադարձել է Ն. Տիգրանյանի հրապարակախոսական գործունեությանը ևս: Իր տեսակետները, մտքերն ու դիտարկումները «արևելյան երաժշտության» մասին կոմպոզիտորը շարադրել է գիտական անկասկած հետաքրքրություն ներկայացնող հոդվածներում: Նա առաջինն է նկարագրել հայ ժողովրդական պարերը և մուղամները, դրել մուղամների գիտական վերլուծության հիմքերը:

---

[9] *Р. Мазманян, Никогайос Тигранян. Жизнь и творчество, Диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения, Ер., 1973, стр. 80.*

[10] *Р. Мазманян, Никогайос Тигранян.Жизнь и творчество,Автореферат..., стр. 19.*

[11] *Նույն տեղում, էջ 17:*

Ն. Տիգրանյանի մասին ուսումնասիրությունն արժանացավ բարձր գնահատականի: Ատենախոսության ընդդիմախոս, արվեստագիտության դոկտոր Մ. Մուրադյանը նկատեց. «Ներկա աշխատության հեղինակը լավ ծանոթ է Ն.Տիգրանյանի մասին եղած գրականությանը, որի քննական տեսության մեջ ցուցաբերել է իր քննադատական վերաբերմունքը հեղինակների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում վեճի բռնվել նույնիսկ նրանցից նշանավորների հետ: Այդպես է, օրինակ, Վ. Ղորղանյանի դեպքում, երբ նա իր հոդվածներում պնդում էր, որ Ն. Տիգրանյանը (ավելի ուշ՝ նաև Կոմիտասը) ճիշտ չեն վարվում, որ ժողովրդական երգերն ու պարեղանակները հրատարակում են իրենց մշակմամբ: Դրանով նրանք ոչ թե օգուտ, այլ վնաս են հասցնում երաժշտության զարգացմանը: Ղորղանյանը գտնում էր, որ ժողովրդական երգերը պետք է հրատարակել միայն որպես ազգագրական գործեր: Անդրադառնալով այս հարցին՝ Ռ. Մազմանյանն իրավացիորեն գտնում է, որ Վ. Ղորղանյանը, տվյալ հարցում անկասկած սխալվել է և չի կարողացել գնահատել Տիգրանյանի և Կոմիտասի կատարած աշխատանքի սկզբունքային կարևոր նշանակությունը (էջ 6-7):[12]

Հընթացս իր հետազոտական աշխատանքի՝ Ռ. Մազմանյանը, գրականությունն ու ժամանակաշրջանն ուսումնասիրելուց զատ, հավաքել է ժամանակակիցների հիշողությունները Տիգրանյանի մասին, ի մի բերել կոմպոզիտորի տպագրված ու ձեռագիր՝ անտիպ հոդվածները, նամակներն ու արխիվային փաստաթղթերը: Դրանք օգտագործելով ատենախոսության մեջ՝ հեղինակը շարադրում է կոմպոզիտորի ստեղծագործական առավել ընդարձակ ու ամբողջական կենսագրությունը, որը պարզ պատկերացում է տալիս նրա անցած ուղու և ստեղծագործության մասին: Մ.Մուրադյանի գնահատմամբ «աշխատության կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ հեղինակը Ն. Տիգրանյանին դիտել է իր շրջապատի հետ ունեցած կապակցությունների մեջ և որոշել նրա տեղը հայ երաժշտության պատմության մեջ: Դրան նա հասել է ոչ միայն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի երևույթների բնութագրությամբ, այլև արվեստի տարբեր բնագավառներում գոյություն ունեցող վիճակի և հատկապես երաժշտության բնագավառում տիրող դրության վերաբերյալ անհրաժեշտ նյութեր հաղորդելու միջոցով: Պարզելով այն, թե ի՞նչ էր արված Ն. Տիգրանյանի հանդես գալուց առաջ և ի՞նչ էին անում նրա ժամանակակիցները, հատկապես Տ. Չուխաճյանը, Ջ. Կարա-Մուրզան, Գ. Ղորղանյանը և Մ. Եկմալյանը, դիսերտանտը հնարավորություն է ստանում ճիշտ գնահատել Ն. Տիգրանյանի տեղն ու նշանակությունը հայ երաժշտության պատմության պրոցեսում»:[13]

1978թ. լույս է տեսնում Ն. Տիգրանյանի մասին Ռ. Մազմանյանի մենագրությունը, որից հետո հեղինակը ձեռնամուխ է լինում կոմպոզիտորի հոդվածների, հուշերի և նամակների ժողովածուի հրատարակման գործին՝ հեղինակելով ներածական ծավալուն հոդվածով: Ժողովածուն, որ երևան եկավ 1981թ., ներառում է մեծաքանակ վավերագրական նյութեր, որոնք ոչ միայն լույս են սփռում Ն. Տիգրանյանի կյանքի ու ստեղծագործության վրա, այլև պատկերացում տալիս հայ պրոֆեսիոնալ երաժշտության սկզբնավորման ժամանակաշրջանի մասին: Ժողովածուն կազմող երեք բաժիններից առաջինում տեղ են գտել կոմպոզիտորի հոդվածներն ու հիշողությունները, այդ թվում՝ Կոմիտասի, Աղամալ Մելիք-Աղամալյանի մասին, երկրորդ բաժնում Տիգրանյանի մասին են պատմում ժամանակակիցները՝ Ալեքսանդր Սպենդիարյանը, Հարո Ստեփանյանը, Մարտին Մազմանյանը, Գեորգի Տիգրանովը, Միքայել Տերյանը, Սամսոն Գասպարյանը, Ցիցիլիա Բրուտյանը, Հրաչյա Բոգդանյանը և ուրիշներ՝ արժեքավոր փաստեր ներկայացնելով կոմպոզիտորի գործունեության տարբեր տարիների արգասաբեր աշխատանքի մասին, բացահայտելով Ն. Տիգրանյանի փոխհարաբերություններն ու ստեղծագործական շփումները ժամանակակիցների հետ: Սրանցում տեղ են գտել հայրենական երաժշտության զարգացման հարցերին առնչվող՝ Տիգրանյանի մտքերը: Ժողովածուի եզրափակիչ բաժնում զետեղված է Տիգրանյանի նամականին. այստեղ են կոմպոզիտորի նամակները՝ հասցեագրված Ալ. Սպենդիարյանին, Ռ.

---

[12] *Մ. Մ ու ր ա դ յ ա ն, Կարծիք երաժշտագետ Ռ. Մազմանյանի «Նիկողայոս Տիգրանյան» թեկնածուական դիսերտացիայի մասին, էջ 2 (Ռ. Մազմանյանի արխիվ):*

[13] *Նույն տեղում, էջ 3:*

Մելիքյանին, Ա. Մայիլյանին, Ռ. Թերլեմեզյանին, Գ. Կազաչենկոյին և այլոց, ինչպես նաև Նրանցից, Կոմիտասից, Գ. Տիգրանովից, Հ. Նալբանդյանից, Ս. Գասպարյանից, Հ. Ստեփանյանից ստացված նամակները:

Այսպիսով, Արվեստի ինստիտուտի ջանքերով լույս աշխարհ են եկել Ն. Տիգրանյանի մասին մենագրությունը, նրա հուշերի և հոդվածների ժողովածուն, նամականին: Սակայն ինստիտուտը դեռևս չմարած պարտք ունի մեծ գյումրեցու անթառամ հիշատակի առջև. նկատի ունենք կոմպոզիտորի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը: Լիահույս ենք, որ Ն. Տիգրանյանի հաջորդ հոբելյանին արդեն մեր սեղանին կլինեն նրա ժառանգության ակադեմիական հատորները...

## ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА И ИССЛЕДОВАНИЕ ТВОРЧЕСТВА Н. ТИГРАНЯНА
(к 150-летию со дня рождения Н. Тиграняна)

___ *Резюме* ___ ___ *А. Асатрян* ___

Одним из первых капитальных исследований, проведенных в Институте искусств АН Армянской ССР было посвящено творчеству выдающегося композитора, одного из основоположников армянской профессиональной музыки, Н. Тиграняна. Этому была посвящена диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения Рузанны Мазманян. В этой работе впервые были представлены все сферы творческой деятельности Н. Тиграняна – композитора, музыковеда, этнографа, исполнителя, педагога.